



**«ԱՐԱՐԱՏ» ԱՄՍԱԳՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ
ՀԱՐՅՈՒՐԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՄԱՅՐ ԱԹՈՒՌԻՄ**

Հանդիսավոր սուրբ պատարագ և քարոզ

Այս տարի մայիսի 1-ին լրացավ Մայր Աթոռի առաջին պաշտոնաթերթ «Արարատ» ամսագրի հրատարակության հարյուրամյակը:

Այս առթիվ Վեհափառ Հայրապետի թելադրությամբ և հրահանգով կազմվել էր հոբելյանական հանդիսությանը մի ծրագիր, և պատարագի մատուցմամբ, քարոզով, հոգեհանգստյան պաշտոնի կատարմամբ և այլ միջոցառումներով, ըստ արժանվույն մշելու համար այդ կարևոր և հիշարժան տարեթիվը:

Նոյեմբերի 10-ին, կիրակի օրը, Մայր տաճարում հանդիսավոր և պատարագ է մատուցում հոգևոր ճեմարանի տեսուչ հոգ. տ. Ներսես Ծ. վրդ. Պոգոսյանը և քարոզում «Երանի մեռելոցն որք ի Տէր անջեցին, զի գործք իրեանց չոգան զհետ անցա» (Յայտ. ԺԴ 13) բնաբանով: Պատարագիչ հայր սուրբը իր քարոզի մեջ ներկայացնում է Գևորգ Դ կաթողիկոսի կյանքն ու մշակութային, կրթական գործունեությունը, մանավանդ որպես «Արարատ» ամսագրի հիմնադրի, և ապա խոսում է Մայր Աթոռի առաջին պաշտոնաթերթի կատարած կրոնական, եկեղեցական և հայագիտական մեծ և շնորհակալ դերի մասին, ոգեկոչելով նաև հիշատակը ամսագրին իրենց աշխատակցության բաժինը բերած Մայր Աթոռի միաբանության լսնդամներին և մոտավորակամության:

Ա. պատարագին և քարոզին ներկա է Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը, շրջապատված միաբաններով և ախյուրքից Մայր Աթոռ ժամանած ուխտավորներով:

Ա. պատարագի եկամյան երգեցողությունը կատարում է շնորհալիորեն Մայր տաճարի երգեցիկ խումբը:

Հոգեհանգիստ

Ա. պատարագը վեհությամբ շարունակվում է մինչև արձակման Ավետարանը:

Այնուհետև Վեհափառ Հայրապետը եկեղեցական թափորով առաջնորդվում է Մայր տաճարի գմբջում, զանգակատան հարավային կողմում, Հայրապետների շարքում երջանկահիշատակ Տ. Տ. Գևորգ Դ Ամենայն Հայոց Հայրապետի շիրիմը, որի վրա Ն. Ա. Օծության հանդիսադրությամբ և ի ներկայության հոծ բազմության, կատարվում է հոգեհանգստյան մասնավոր պաշտոն:

Հանգստյան Ավետարանի ընթերցումից հետո, Հայոց Հայրապետը արտասանում է «Քրիստոս Որդի Աստուծոյ» աղոթքը, ոգեկոչելով հիշատակը հայ մշակույթի մեծ երախտավորներին՝ Տ. Տ. Գևորգ Դ կաթողիկոսին, Մայր Աթոռի միաբանության և բոլոր այն մտավորականների, որոնք իրենց ծառայությունն ու մասնակցությունն են բերել «Արարատ» ամսագրի աշխատակցության միջոցով հայ եկեղեցու պայծառությանը, և հայ մշակույթի զարգացմանը:

Հանդիսավոր Երես Վեհարանում՝ Ընկրված «Արարատ»-ի հարյուրամյակին

Նոյեմբերի 10-ին, երեկոյան ժամը 17-ին, Վեհարանի հանդիսությանը ջահագարդ դահլիճում տեղի է ունենում հանդիսավոր երես՝ Ընկրված «Արարատ» ամսագրի հրատարակության հարյուրամյակին:

Որոշյալ ժամին հախագահական պատվո սեղանի շուրջ տեղ են գրավում Վեհափառ Հայրապետը, որպես հանդիսության հախագահ, Մայր տաճարի լուսարարապետ տ. Հայկազուն արքեպ. Աբրահամյանը, ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Արեւմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ և Ֆրանսիայի հայոց առաջնորդ տ. Սերովքե արքեպ. Մանուկյանը, Գերագույն հոգևոր խորհրդի անդամ պրոֆ. Ա. Առաքելյանը և դարձյալ ուխտավորաբար տ. Էջմիածնում գտնվող հայտնի մտավորական Հ. Մ. Սիրունին:

Նախագահական սեղանի շուրջ տեղ է գրավել նաև ՀՍՄՀ Միեմիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Կ. Դավաթյանը:

Հանդիսությանը ներկա են շուրջ 300 հրավիրյալներ, այդ թվում՝ Գերագույն հոգևոր խորհրդի և միաբանության անդամներ, «Էջմիածին» ամսագրի խմբագրությունն ու խմբագրական մարմինը, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմն ու ուսանողությունը, մտավորականներ, թղթակիցներ և այլ հրավիրյալներ:

Հանդիսությանը ներկա են նաև Երևանի 2756-ամյակի առթիվ ուխտավորաբար մայր հայրենիքում գտնվող մտավորականներ, ծանոթ ազգային դեմքեր, այդ թվում՝ ֆրանսիացի հայտնի հագագետ, հարգելի պրոֆ. Ֆրեդերիկ Ֆելդին՝ Փարիզից, պրոֆ. Գերսամ Ահարոնյանը («Զարթոնք» օրաթերթի խմբագիր)՝ Բեյրութից, պրոֆ. Կարայիս Դազարյանը՝ Ժնևից, Գևորգյան պրոֆ. Արտավազ Բերբերյանը՝ Փարիզից, երգչուհի օր. Սոնա Դազարյանը՝ Բեյրութից, հասարակական գործիչ պրոֆ. Հովհաննես Դիմիտրյանը՝ Բուենոս-Այրեսից, և ուրիշներ:

Հանդիսավոր երեսը բացվում է Հայկական ՍՍՀ պետական հիմնի նվագով, որին հաջորդում է հոգևոր ճեմարանի երգչախմբի կատարած «Որք զարդարեցին տնօրինաբար» շարականի կատարումը, որոնք ուղղված են հոտնեայս:

Այնուհետև՝ հանդիսության բացման խոսքով հանդես է գալիս Մայր Աթոռի լուսարարապետ տ. Հայկազուն արքեպ. Աբրահամյանը և նշում, որ երջանկահիշատակ «Տ. Տ. Գևորգ Դ կաթողիկոսը աստվածաշնչական անխոս Արարատին դիմացը կանգնեցուց ու-

րիշ իմացական Արարատ մը, որ պիտի լեզու առներ ու պիտի պատմեր անցյալ ու ներկա փառքերն ու վիշտերը հայ ժողովուրդին, հայ եկեղեցիին, և հայությունը պիտի համախմբեր տ. Էջմիածնի լուսին ու խորհուրդին շուրջ, հայրենիքի հողին ձրա»:

«Արարատ»-ի հրատարակության հարյուրամյակին Ընկրված հանդիսությունը բաղկանում էր երկու մասից:

Առաջին մասում՝ գեկուցումներ և ողջույնի խոսքեր, իսկ երկրորդ մասում՝ գեղարվեստական ծրագրի կատարում:

Զեկուցման համար առաջինը խոսքը տրվում է «Էջմիածին» ամսագրի խմբագիր Արթուր Հատիսյանին, որը նշելուց հետո, թե այս տարի մայիսի 1-ին լուսավ Մայր Աթոռ տ. Էջմիածնի առաջին պաշտոնաթերթ «Արարատ»-ի հրատարակության հարյուրամյակը և հիշարժան այդ տարեթիվը նշելու հետ կապված միջոցառումները, ըստ հայրապետական հրահանգի և թելադրության, խոսում է «Արարատ» ամսագրի կատարած մեծ դերի մասին մեր եկեղեցական պատմության, մատենագրության և հայ բանասիրության մեջ, շեշտելով, որ «Արարատ»-ը եվրոպական իմաստով միակ կրոնական լուսն ու գիտական ամսագիրն է եղել արևելահայերի մեջ, որի կրոնա-քարոզական, եկեղեցագիտական, դավանաբանական հարցերի խորը ուսումնասիրությանը, գիտական մակարդակին, ծավալին ու բարձրության չի հասել ոչ մի այլ կրոնական հայ ամսագիր և, մինչև Հայաստանում սովետական կարգերի հաստատումը, «Արարատ»-ը հանդիսացել է նաև միակ լուսն բանասիրական ամսագիրը, որին հիմնը աշխատակցությունն են դերել հայագիտությանը զբաղվող մեր մեծ գիտնականները:

Այնուհետև հարգելի բանասիր կանգ առնելով «Արարատ»-ի հրատարակության հիմնական նպատակին, նշում է, որ այն եղել է «հայկազուն սերնդոց սրտի և հոգվույն եռանդն ու աշխույժը» վառել, «կրթության և զարգացման սիրով և ազգային դաստիարակության» միջոցով բանալ «հայրենյաց կենտրոններ հայրենի հնություններից լուսարար» և «ազգային մեծագործություններից պատմական հիշատակները կենդանացնել, ի մը խիթարություն հեռավոր ազգայնոց, որոնք ժամանակավ հատված գնալով ի պտույտ և այլ աշխարհաց, առ գետս բարեխաղվող կրնալին ու կհիշեն զՀայաստան...» («Արարատ», 1868, Յառաջաբան, էջ 1):

Այնուհետև Մայր Աթոռում և միաբանության մեջ հոգևոր, մշակութային կյանքը խթանելու, հավատի և հայրենասիրության եռանդն ու այս աշխույժը բուրբուրելու և ուսումնական շարժումը՝ քաջալերելու համար Գե-

վորգ Դ-ը «իր ուսումնասիրող հոգւոյն եռանդեամբ» ձեռնարկում էր ամսագրի հրատարակությանը, «ազգային, բարոյական զարգացմանը սատարելու» և դրանով էլ ավելի բարձրացնելու համար նաև միաբանության անունն ու վարկը «հոգևոր պարտականությունը կատարելու և նույն հոգևոր կոչման վարկը անձին սեպականելու, որով միայն կարող ենք ազգիս առաջին անմեղադիր լինել» («Արարատ», 1868, էջ 2):

«Արարատ»-ը թեև լրագրության պատմության մեջ անդրանիկներից չէր, բայց իր մասնավոր տեղն ու նշանակությունն է ունեցել իր բովանդակությամբ-ուղղությամբ, հայ եկեղեցուն և մեր մշակույթի զարգացման մատուցած իր ծառայությամբ, հայ լրագրության պատմության մեջ:

«Արարատ»-ը հրատարակվեց ավելի քան կես դար և եղավ հայ կրոնական մամուլի, ինչպես նաև մեր լրագրության պատմության մեջ լավագույն, բովանդակային և մանավանդ երկարակյաց ամսագրերից մեկը:

«Արարատ» ամսագիրը հանդիսացավ հայ դավանաբանական մտքի, եկեղեցական պատմության և իրավունքի և հայագիտության հանդիսարան:

«Արարատ»-ը միաժամանակ եղավ հայ հավատի, հայեցի բարոյախոսության թեմ և հայկական հարցի և դատի պաշտպանության ամբիոն:

«Արարատ»-ը սրբությամբ կատարեց իր առաքելությունը և հայ հասարակական մղտքի զարգացման վրա ունեցավ մեծ ազդեցություն: Դժբախտաբար, սակայն, ցարդ, ինչպես որ հարկն է, լուրջ, բազմակողմանի, գիտական վերլուծության ու ուսումնասիրության չեն ենթարկվել «Արարատ»-ը և Մայր Աթոռի միաբանության կատարած մշակութային, մատենագրական, բանասիրական վաստակը:

Հայ պարբերական մամուլի ուսումնասիրությամբ զբաղվողների մոտ քննության չի առնվել այս կարևոր հարցը: Նրանք բավարարվել են միայն հայ պարբերական մամուլի մատենագիտական ցանկերի կազմությամբ: Այս ասպարեզում մեծ և մնացուն աշխատանք է կատարել Ա. Կարինյանը, որի աշխատության երրորդ հատորը, սակայն, որն ընդգրկելու էր 1850—1900 թվականների հայ մամուլը, լույս չի տեսել: Որով նրա քննության ու ուսումնասիրության տեսադաշտից էլ դուրս է մնացել առայժմ «Արարատ»-ը:

Գ. Լևոնյանը իր «Հայոց պարբերական մամուլը» աշխատության մեջ (Երևան, 1934 թ.) «Արարատ»-ի վերջին տարիների մասին ունի միայն հետևյալ վկայությունը.

«Արարատ»-ը լուրջ գիտական-ակադեմիական շրջաններ է ունեցել, իր էջերում տպագրելով Գալուստ Տեր-Մկրտչյանի, Մ. Աբեղյանի, Ս. Կանայանի, Հր. Անտոյանի, Ն. Ադունցի, Կարապետ, Մեսրոպ, Գարեգին, Կոմիտաս, Երվանդ վարդապետների նման հայտնի բանասերների ուսումնասիրությունները: «Արարատ»-ը իր ծալքերում պարունակում է հարուստ նյութեր, որոնցից օգտվել կարող է և՛ գրականագետը, և՛ պատմագետ-ազգագրագետը, և՛ լեզվաբանը: Մենք տեսնում ենք նաև այնտեղ և՛ Դազարուս Աղայանին, և՛ Հովհ. Հովհաննիսյանին» (էջ 36):

Մեծավաստակ բանասեր-գիտնականի գնահատությունը, իհարկե, ճիշտ է, բայց ոչ ամբողջական: «Արարատ»-ի բոլոր համարներում մեծարժեք էջեր կան նաև հայ եկեղեցու պատմության, արվեստի, հայ դավանաբանական մտքի, եկեղեցական իրավունքի, հայ մանկավարժության, գիտության և այլ բնագավառներին նվիրված:

«Արարատ»-ի դերին և Մայր Աթոռի միաբանության եկեղեցագիտական, մատենագրական, բանասիրական վաստակին անդրադարձել է նաև ծանոթ գրաքննադատ Հ. Օշականը իր «Արևելահայ բանասիրությունն և էջմիածին» ուսումնասիրության մեջ՝ գրքված Գարեգին Կաթողիկոս Հովսեփյանցի ծննդյան 80-ամյակի և մատենագրական գործունեության 60-ամյակի առթիվ: Գիրքը տպված է Անթիլիասում 1952 թ. (208 էջ), որին և կցված է նույն հարցի վերաբերյալ Գարեգին Կաթողիկոսի վկայությունը: Դեռևս 1947 թ. «Սիոն» ամսագրում (մարտ համար) Օշականը անդրադարձել է այդ հարցին: Թե՛ իր հոդվածում և թե՛ իր գրքում Օշականը քննության է առել հիմնականում արևելահայ բանասիրական դպրոցը և անդրադարձել է նաև «Արարատ»-ին և նրա միջոցով ս. էջմիածնի բանասիրական դպրոցի կատարած գիտական նպաստին՝ արևելահայ բանասիրության մեջ:

Խոսելով «Արարատ»-ի կատարած մեծ գործի մասին, հարգելի բանախոսը՝ ծանոթ գրաքննադատ Հ. Օշականի գնահատությունն է բերում, ըստ որի «Արարատ»-ը հայագիտական իր մասերում մեջ, առնվազն հավասար է հազմավեպին և Հանդես Ամսթրային (38), որոնք եվրոպական կեդրոններում և իմացականության մոտիկ ըլլալու իրենց բարիքները իրավունք չունին անեցնելու, գեղազանցության հարգել արժանիքով» (38): Արդարև, էջմիածնականները հրաշալի կերպով կատարեցին «սպասար մեր մշակույթին» արվեստների ուղիով, սպասար մեր՝ եկեղեցու՝ պարտականությանը՝ ճանապարհով» (28): «Արարատ»-ը կատարել է իր պարտքի բաժինը՝ եվրոպական ուսումններում մարդոց

չափ ու տեղագրական, ազգագրական հարցերու մեջ ալ գերազանց համեմատություններով:

1950-ին Երևան, այժմու արևելահայ բանասիրության ուստանը, գիտե մեր պատմութենէն շատ ավելի բան, որքան չեն իսկ երկվակայեր Վենետիկն ու Վիեննան:

Եր բանասիրության մեջ Ա. Հատիտյանը բերում է նաև երջանկահիշատակ Տ. Տ. Գարեգին Հովսեփյանց կաթողիկոսի վկայությունը Էջմիածնի միաբանության և «Արարատ»-ի կատարած եկեղեցագիտական, հայագիտական ծառայությունների մասին:

«Հայագիտության և հայերենագիտության ծագման և զարգացման մեջ Էջմիածինը շատ կարևոր դեր է կատարել, որ գրեթե ամենավաճ է մեր մտավորականության կողմից: Այիշանի «Ժիրակ»-ը, «Արարատ»-ն ու «Սյունիք»-ը իրենց կարևորագույն մասով հիմնված են Էջմիածնի միաբանների աշխատությունների կամ նրանց բերած օգնության վրա: Ծախաթունյանի, Սարգիս եպիսկոպոս Զալալյանի, Ստեփանոս վարդապետ Մխիթարյանի, Սմբատյան Մեսրոպ և Բարխուդարյան Մակար եպիսկոպոսների և Քաջբերունու ճանապարհորդական նկատողությունները, որ տպագրվեցան «Արարատ»-ի մեջ, նաև հետագա միաբաններից ոմանց գործերը հիմքն են ներկա հայերենագիտության և աղբյուրները մեր անցյալ շինարարության, այսինքն ճարտարապետության ուսումնասիրության և հասկացողության: Երևակայությամբ միայն, առանց գործնական փորձի, դժվար է իրական գաղափար կազմել, թե ինչ անասելի դժվարությունների և աշխատանքի հետ է կապված հարյուրավոր շեն ու ավերակ վանքերի արձանագրությունների ընթերցումը, նկարագրությունը: Ամենայն հարգանք և գնահատանք Վենետիկի և Վիեննայի Մխիթարյան մեծ աշխատավորներին, բայց ո՛չ Էջմիածնի դերի ուրացմամբ:

Հայագիտության կամ բանասիրության համար Էջմիածնի կատարած ամենամեծ և հանուր հայության երախտագիտության արժանի գործը հազարավոր ձեռագիրների հավաքումն ու պահպանությունն է, հայ ժողովրդի ամենամեծ ժառանգությունը, հարըստությունը:

Առանց այսպիսի հաստատության արեւելահայ բանասիրության մասին երազել անգամ կարելի չէր:

Առաջին գեկուցողը իր խոսքն ավարտում է հետևյալ հաստատումով:

«Այսօր ուխտի օր է նաև մեզ՝ Մայր Աթոռի միաբանության, խմբագրական, դասախոսական կազմի, պաշտոնետության և ս. Էջմիածնի մոտիկ կանգնած մեր մտավորա-

կանության համար: Այս հանդիսավոր առիթով, անմահանջ սիրով, բոլորակամ սրտով վերակրկնում ենք մեր սրբազան ուխտը, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի օրհնաբեր ներկայությամբ և Նրա հայրապետական բարձր առաջնորդության ներքո շարունակելու մեր Է՛լ համեստ սպասն ու ծառայությունը՝ ի նպաստ հայ՝ մշակույթին, հայ հավատի և հայ ոգիի Արարատը հանդիսացող Մայր Աթոռ ս. Էջմիածնին, և նրանց միջոցով վերածնված մեր ժողովրդին և մայր հայրենիքին»:

Այնուհետև ելույթ է ունենում «Էջմիածին» ամսագրի խմբագրական մարմնի անդամ և Մեսրոպ Մաշտոցի անվան ձեռագրաց Մատենադարանի գիտաշխատող Սուրեն Քոլանջյանը «Արարատ»-ը և հայագիտությունը թեմայի շուրջ:

Հարգելի գեկուցողը հանգամանորեն և բարեխղճությամբ ներկայացնում է «Արարատ» ամսագրի կատարած դերը հայագիտության զարգացման բնագավառում, ժամանակագրականորեն, տասնամյակներով նշելով այդ տարիներին «Արարատ»-ում տպագրված հայագիտական ու հայերենագիտական, ձեռագրագիտական աշխատանքների գիտական արժեքն ու կարևորությունը:

«Արարատ»-ի առաջին տասնամյակը ընդհանրապես ընդունված է կոչել «որոնումների շրջան», քանի որ այն հիմնականում, ինչպես մեր գրեթե բոլոր ժամանակակից հանդեսները, բովանդակում էր այլազան բնույթի հետաքրքրական խառն. նյութեր: Սակայն միաժամանակ խմբագրությունը հատկապես իր աստանդական ընթերցողներին ցանկանում էր ծանոթացնել հայ անցյալի նշխարների հետ: Այնտեղ սովոր էր, որ աշխարհով մեկ սփռված հայերը «Արարատ»-ից սպասում էին, որ նա «Հայրենյաց կենտրոնեն հայրենի հեղինակաց թանգարանը բանար և ազգային մեծագործությանց պատմական հիշատակները կենդանացներ ի մխիթարություն հեռավոր ազգայնոց»: Ավելի ուշ հայտնի գրող Ղ. Աղայանը «Արարատ»-ի 1869 թ. համար 1-ում գրում էր, որ «ամսագիրը լուր ամեն ջանքը պիտի գործ դնե լինել այնպիսի մի պատկեր, որո մեջ Հայր կարողանա տեսնել լուր անցյալը և ներկան...»: Նույն հանդեսի մի այլ հայտարարության մեջ ևս ցանկություն էր հայտնվում հայագիտական բաժինը մեծացնել. «Բովանդակության մասին ևս կխոստանա հավելացնել բանասիրաց հետաքրքրության արժանի հնագիտությունը, և ժողովրդական ճաշակին համաձայն քաղվածներ, և այլն...»:

«Արարատ»-ի երկրորդ տասնամյակը, ուր ընդգրկում է 1878—1887 թթ., նրա պատմության մեջ կարելի է ասել, որ դառնում է իր

հունը գտնելու և դեպի վերելք նախապատրաստվելու ծանանակաշրջան: Խմբագրությունը ջանում է ավելի մեծ թվով աշխատակիցների ընդգրկումով ընդարձակել նաև հայագիտական բաժինը: 1879 թ. հրատարակելով «Սրբոց վարդապետացն Հայոց Մովսիսի և Դավթի հարցմունք ըստ երկարակազմ» բնագիրը, խմբագրությունը հայտնեց է այն մասին, որ «Եթե առաջիկային ևս Մայր Աթոռի գրչագրերում կարևոր նյութեր հայտնաբերվեն, հրատարակվելու են իբրև ազգային հնության փափագելի բեկորներ «Արարատ» ամսագրին մեջ, Վեհափառ կաթողիկոսի բարեհաճության և պատվերին համաձայն, որ ազգասիրաբար մեծ հովանավոր է ազգային գրականության մշակման» (էջ 188—189):

«Արարատ»-ի երրորդ տասնամյակը շրջադարձային կետ հանդիսացավ ոչ միայն ամսագրի, այլև հայագիտության կյանքում: Այս շրջանում այնտեղ սկսում են հանդես գալ ապագայի այնպիսի խոշոր հայագետներ և ձեռագրագետներ, ինչպիսիք են Կ. Վ. Տեր-Սկրտչյանը, Գ. Տեր-Սկրտչյանը, Սողոմոն Սողոմոնյանն ա.ը (անմեան Կոմիտաս վարդապետը), Սահակ Վ. Ամատունին, Խաչիկ Վ. Դադյանը, Մեսրոպ Վ. Տեր-Մովսիսյանը, իսկ աշխարհականներից՝ Կ. Կոստանյանը, Մ. Արեղյանը, Սո. Մալխասյանը, Հր. Աճառյանը, Գր. Խալաթյանը, Երվ. Ծահագիրը, Նիկ. Քարամյանը, Ա. Տեր-Միքելյանը, Ս. Հայկունին և ուրիշները: «Արարատ»-ի խմբագրերը և հրտ. հանձնաժողովները հետագայում ընտրվում են հիշյալ պատկանելի գիտնականներից, որոնք էլ նոր փալլ են տալիս իր վերելքը ապրող հանդեսին: Մեծ ուշադրություն է դարձվում հայագիտական հոդվածներ հրատարակելու ուղղությամբ: 1895 թ. առաջնորդություն կարդում ենք. «Արարատ»-ը նաև պատմական և գրականական մի թերթ պիտի լինի, որ լույս ափռե մեր պատմության և գրականության մուրթը և դեռ անձանթ կետերի վրա»:

«Արարատ»-ը իր 4-րդ տասնամյակն է թևակոխում (1898—1907) հաստատաբայլ շարունակելով իր բուն վերելքը: 1899 թ. վերջում «Արարատ»-ը մեծ ձեռնհասությամբ խմբագրող Կարապետ Վ. Տեր-Սկրտչյանը երբ հրաժարվեց, 1900 թ. սկզբից նրա խմբագրությունը Խրիմյան Հայրիկը հանձնեց հայագիտության ապագա մեծ երախտավոր Գարեգին Վ. Հովսեփյանին, որին կրոնական և այլ բնույթի բաժինների հետ միասին, հրահանգում էր հատուկ ուշադրություն դարձնել մասնավորապես հայագիտական գործերի վրա: Հայրիկը այս առթիվ գրել է. «Ջանի գործ դնել զօրացուցանել ըստ կոչման ամսագրին Մ, Աթոռոյս գիտական, գլխաւմա-

կան, զմատենագրական, զհնախօսական բաժինն առ ի բարձրացուցանել զբարի անուն և զգիտական համբաւ միաբանութեան Սորբ Էջմիածնի»:

«Արարատ»-ի 5-րդ տասնամյակը, որը և վերջինը եղավ նրա հարուստ կյանքում, շատ բանով է գիշերում իր 3-րդ և 4-րդ տասնամյակների համարներին: Այդ ստաջին հերթին հետևանք էր խմբագրական կազմի թույլացմանը: Բազմահմուտ գիտնական Գարեգին Հովսեփյանցը 1908 թ. նոյեմբերի 5-ին ազատվեց խմբագրապետի պաշտոնից:

1909 թ. Մատթեոս Բ կաթողիկոսը խմբագիր է նշանակում Հուսիկ արքեպիսկոպոսին: Սակայն շուտով 1911 թ. խմբագիր է նշանակվում Աբել արքեպիսկոպոսը, իսկ խմբագրական անդամներ են դառնում Մ. Արեղյանը, Գ. Այթունյանը, Ռ. Արրահամյանը, Գ. Էդիսյանը:

«Արարատ»-ի վերջին շրջանի խմբագրությունն են վարում Մեսրոպ և Գարեգին և պիսկոպոսները և Գյուտ վարդապետը:

1918—1919 թթ. վերջի երկու համարները, որոնք շատ փոքր էին իրենց ծավալով, գրեթե ամբողջությամբ նվիրված էին հայագիտական նյութերին: Վերջին տասնամյակում պատմա-բանասիրական նյութերով հանդես են գալիս Միաբանը, Գարեգին Վ. Հովսեփյանը, Մովսես Վ. Տեր-Մովսիսյանը, Խաչիկ Սամվելյանը, Սո. Կանաչյանը, Թ. Ավդալբեկյանը, Մ. Արեղյանը, Հր. Աճառյանը և ուրիշներ: Տիրալ վարդապետը սկսում է հրատարակությունը մոռացված մի հայ երգչի (Ֆրիկի) մասին գրած իր ուսումնասիրությունը, Մեսրոպ Վ. Մաքսուդյանը լույս է բերում Ագուլիսի և շրջակայքի ձեռագրերի ցուցակը, որը ընդգրկում է 37 գրչագրերի նկարագրություն և որոնց մեծ մասը այժմ կորած է գիտության համար: Դարձյալ «Արարատ»-ի այս շրջանի համարներում առաջին անգամ հանդես են գալիս նորակուր անուններ, որոնք ևս մեծ անուն էին թողնելու մեր վերածնած հայրենիքի գիտական բարձր շրջանակներում: Վերջին տասնամյակի այդ նոր աշխատակիցներից էին Արսեն Տերտերյանը «Հ. Թումանյանի և այլոց մասին» գրած իր գրականագիտական հոդվածներով, Գր. Դավանցյանը՝ «Հնության մի քանի հիշատակարաններ», Ար. Հովհաննիսյանը՝ «Նոր նյութեր հայ ունիթոռական պատմությունից» և «Պետրոս դի Սարգիս Գիյանենց» և այլ ուսումնասիրություններով:

«Արարատ»-ը իր շուրջ համախմբած մեծանուն գիտնականներով իր ժամանակին հանդիսացել է մեր գիտության ուրույն կանառ: Այստեղից էլ բնավ պատահական է լինույթ չպետք է համարել այն հանգամանքը, որ վերանվելով մեր հայրենիքի նորա-

ստեղծ պետական համայնարանում, ինչպես նաև գիտությունների կաճառում հրավիրված դասախոսների և անդամների շարքում առաջին հերթին տեղ են գրավել նաև «Արարատ»-ի շուրջ երբեմն համախմբված գիտնականներից ոմանք:

«Արարատ»-ի արժեքը ավելի քան կրկնապատկվում է, երբ նկատի ենք ունենում հատկապես նրա էջերում պարփակված ճանաչական հրապարակումներն ու պատմա-բանասիրական բազմաթիվ մեծարժեք հետազոտությունները: Նրա էջերում հայագետը կարող է գտնել հայագիտության բազմազան և բազմաթիվազան քննադատական, ինչպես նաև տարբեր ժամանակաշրջաններին վերաբերող ուշագրավ գործեր:

Թեև 100 տարի է անցնում այսօր «Արարատ»-ի հիմնադրումից, սակայն նա իր ընթացիկությամբ իբրև հայագիտության ակադեմիայի գանձարան միշտ թաքնվում է մեզից:

Հանդիսության ժամանակ, «Արարատ»-ի հարյուրամյակի առիթով, ողջույնի խոսքով հանդես է գալիս ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող ծանոթ մտավորական, գրականագետ, բանասեր Հ. Ծ. Սիրունին, որն առաջ:

«Հավաքված ենք հայ մշակույթի պատմության ուշագրավ մեկ իրադարձությունը տոնավաճառելու համար և նշելու համար հարյուր այն տարիները, որոնց ընթացքին Մայր Աթոռի միաբանները տքնեցան, սերնդե-սերունդ, իրենց քրտինքը խառնելու համար հայ բանասիրության նվաճումներուն և պարբերաբար խոսելու համար հայ ժողովրդին հետ, երեկ՝ «Արարատ»-ի, այսօր՝ «Էջմիածին»-ի բեմերն:

«Արարատ» ամսագրի հրատարակության հարյուրամյակին նվիրված հանդիսությանը Ա. Բաժինը փակվում է Վեհափառ Հայրապետի օրհնության խոսքով:

Ն. Ս. Օծությունը խոսում է 1860-ական թվականներին Եվրոպայում սկիզբ առած փոքր ժողովուրդների, այդ թվում նաև հայ ժողովրդի հոգևոր, մշակութային զարթոնքի մասին՝ գիր ու գրականության միջոցով, ինչպես նաև ազգային ազատագրական շարժումների և պայքարների մասին, որոնք ավարտվեցին ժողովրդի հաղթանակով և նպաստավոր պայմաններ ստեղծեցին փոքր ժողովուրդների ազգային մշակույթների և հոգևոր արժեքների զարգացման համար: Հայ եկեղեցու ծոցում «Արարատ» ամսագրի հրատարակությունը արտահայտություններից մին հանդիսացավ հայ ժողովրդի ազգային-հոգևոր զարթոնքին և քրիստոնեական լույս, ազգային շունչ, հայեցի դաստիարակություն և ջանքեր մեր եկեղեցու զավակներին՝

«հայկազուն սերնդոց»: Ն. Ս. Օծությունը ապա ոգեկոչեց հիշատակը Տ. Տ. Գևորգ Դ կաթողիկոսի, Մայր Աթոռի միաբանության և հայ մտավորականության, որոնք իրենց նպաստը բերեցին հայ մշակույթի, հայագիտության սկզբնավորության և զարգացման, շարժում, որը մեծ նվաճումների հասավ վերջին շուրջ 50 տարիների ընթացքում, մեր վերածնունդ մայր հայրենիքում, հայրենի կառավարության հովանու ներքո հայ գիտնականների հայրենակներ, գիտական ու լուրջ ուսումնասիրություններով:

Իր խոսքի և օրհնության ավարտին Վեհափառ Հայրապետը արտագին հույս հայտնեց, որ մեր երկրի մշակույթի հրաշալի ծաղկման կողքին, Մայր Աթոռի միաբանությունը, «Էջմիածին» ամսագրի շուրջ հավաքված մտավորականությունը նույնպես կշարունակեն իրենց համեստ նպաստը բերել հայ մշակույթի մեծ առաջընթացին, ինչ որ մեծ գոհունակության և ուրախության աղբյուր կհանդիսանա նաև Իր հայրապետական արտի համար:

Տաք թույն տևող ընդմիջումից հետո, գործադրության դրվեց «Արարատ» ամսագրի հարյուրամյակին նվիրված հոբելյանական հանդիսության գեղարվեստական ծրագիրը:

Առաջինը ելույթ ունեցավ հանրապետության ժողովրդական արտիստ, թավջութակահար Գուրգեն Ադամյանը, որը, նվագակցությամբ դաշնակահարուհի Էլենորա Ադամյանի, կատարեց՝

1. Բոբեր, «Հունգարական ռապսոդիա», 2. Կոմիտաս վարդապետ, «Էս առուն» (մշակումը Գուրգեն Ադամյանի), 3. Գուրգեն Ադամյան, Էլենակյան երգ ձոնված Վեհափառ Հայրապետին:

Հոգևոր ճեմարանի Ա. լսարանի ուսանող Խաչիկ Խաչատրյանը արտասանում է Կոստան Զարյանի «Գալիք սերունդներ» բանաստեղծությունը, իսկ Գ. լսարանի ուսանող Հովհաննես սրկ. Գրվրգյանը՝ Սիլվա Կապուտիկյանի «Երդում հայրենի լեզվին»-ը:

Բեյրութահայ ծանոթ երգչուհի Սոնա Ղադարյանը, որն ուխտավորաբար գտնվում էր Մայր Աթոռում և հայրենիքում, հանդես եկավ երեք մեներգերով:

1. Կոմիտաս վարդապետ, «Կոունկ», 2. Գ. Ալեմշահ, «Իմ երգը», 3. Կոմիտաս վարդապետ, «Կաքավիկ»՝ նվագակցությամբ դաշնակահարուհի, վաստակավոր արտիստուհի Մարիանա Հարությունյանի:

Ծանոթ երգչուհի Մարիա Գեղունին հանդես եկավ երկու մեներգերով:

1. «Տաղ առ Տիրամայր», 2. «Տաղ Աստուածածնայ»՝ նվագակցությամբ դաշնակա-

հարուհի, վաստակավոր արտիստուհի Ելենա Տեր-Ղևոնդյանի:

Հանրապետության վաստակավոր արտիստուհի և Մայր տաճարի երգեցիկ խմբի մենակատար Լուսինե Զաքարյանը կատարեց չորս մեներգեր.

1. «Այսօր հարսն լուսոյ» (մշակումը պրոֆ. Ռ. Աթայանի), 2. Նարեկացի, «Սալյն այն իջանէր» (մշակումը պրոֆ. Ռ. Աթայանի), 3. Վարդան Սարգսյան, «Հոյնար», 4. «Պաղ աղբյուրի մոտ» (ծողովորական)՝ նվագակցությամբ դաշնակահարուհի, վաստակավոր արտիստուհի Մարիանա Հարությունյանի:

Հայկական պետական ֆիլհարմոնիայի լարային քառյակը, գեղարվեստական ղեկավար և առաջին ջութակ Լևոն Մամիկոնյան, երկրորդ ջութակ՝ Մարտին Երիցյան,

ալտ՝ Յուրի Մանուկյան, թավջութակ՝ Ֆելիքս Սիմոնյան, կատարեց.

1. Հայդն, սերենադ, 2. Կոմիտաս վարդապետ, «Ալագյազ», 3. Կոմիտաս վարդապետ, «Երկինքն ամպել ա», 4. Կոմիտաս վարդապետ, «Վաղարշապատի պար», 5. Կոմիտաս վարդապետ, «Զինար ես»:

«Արարատ» ամսագրի հրատարակության հարյուրամյակին նվիրված հանդիսության գեղարվեստական մասը ավարտվում է ընդհանուր ու խանդավառ ծափերի մեջ՝ հանուն Հայոց Հայրապետի ու Հայկազուն արքեպ. Աբրահամյանի շնորհակալական խոսքով՝ հայտնված կազմակերպիչ «Էջմիածին» ամսագրի խմբագրությանը և հանդեսի քարեհաջող ու հիշատակության արժանի անցկացման համար իրենց սրտագին մասնակցությունը քերած արվեստագետներին, երգիչներին, արտասանողներին և բոլորին՝ իրենց ներկայության համար:

